

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տիգրան Լեոնիդի Միքայելյանի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքի նորահայտ արաբատառ արձանագրությունները սոցիալ-մշակութային և պատմական համատեքստում (XII-XIXդդ.)» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան հնագիտության բաժնի 2026 թ. փետրվարի 16-ի նիստում քննարկվեց Տիգրան Լեոնիդի Միքայելյանի Հայաստանի Հանրապետության տարածքի նորահայտ արաբատառ արձանագրությունները սոցիալ-մշակութային և պատմական համատեքստում (XII-XIXդդ.)» աշխատանքը պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ պ.գ.թ. Դ. Միրիջանյանը, պ.գ.թ. Հասմիկ Հովհաննիսյանը, պ.գ.թ. Ավետիս Գրիգորյանը, պ.գ.թ. Արման Նալբանդյանը, գիտաշխատողներ Տիգրան Ալեքսանյանը, կրտսեր գիտաշխատողներ Դավիթ Դավթյանը, Աշխեն Ենոքյանը:

Ելույթ ունեցան Դ. Միրիջանյանը, Ա. Նալբանդյանը, Տ. Ալեքսանյանը, Ա. Գրիգորյանը, Հ. Յոզեֆ Կոնստանտինովիչը, Աշխեն Ենոքյանը, Դավիթ Դավթյանը:

Նիստի մասնակիցներն արձանագրեցին հետևյալը.

Տիգրան Լեոնիդի Միքայելյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ի տարածքում առկա արաբատառ արձանագրություններին, որոնք մեր պետության պատմամշակութային ժառանգության կարևոր, բայց նաև քիչ ուսումնասիրված մասն են կազմում: Այս առումով աշխատանքը շատ արժեքավոր է և արդիական:

Ատենախոսության մեջ հեղինակը համակողմանի ներկայացրել է ՀՀ տարածքում առկա արձանագրությունները, հատկապես ընդգծենք հեղինակի կողմից ընթերցված հնագիտական տարբեր առարկաների գրությունները, որոնք կազմում են աշխատանքի ատաղձը:

Հատուկ ընդգծենք, որ հեղինակը նորահայտ արձանագրությունները դիտարկում է նաև սոցիալ-մշակութային և պատմական համատեքստում, ինչն առավել մեծ արժեք է տալիս ատենախոսությանը:

Թեման հաստատվել և փորձաքննություն է անցել ըստ գործող կարգի: Ներկայացված ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք և բովանդակություն: Բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից:

Բազմաթիվ առավելություններով հանդերձ ցանկանում ենք նշել մի քանի դիտարկումներ, որոնք բոլորովին չեն ստվերում ատենախոսության բովանդակությունը:

1. Ցանկալի կլիներ՝ հեղինակն ատենախոսության ներածական մասում պարզաբաներ, թե ինչու ՀՀ որոշ մարզերի արաբատառ արձանագրությունների մասին տվյալներ չկան, մասնավորապես ատենախոսության մեջ բացակայում են Արարատի, Լոռու, Տավուշի մարզերը:
2. Նույն տրամաբանությամբ անհասկալի է, թե ինչու է ատենախոսը ՀՀ –ի տարածքից հայտնի արաբատառ հուշարձանների պատկերագրական և բովանդային համեմատություն տանում պատմական Հայաստանի միայն Բարձր Հայք, Վասպուրական, Տուրուբերան նահանգների հետ:
3. ՀՀ-ում արաբատառ հուշարձանների բաշխվածության մասին տեղեկություններն ավելի պատկերավոր կլինեին, եթե ատենախոսը համապատասխան քարտեզով ցույց տար դրանց տարածվածությունը, նաև գունային երանգավորմամբ նշեր ժամանակային տարբերությունները:
4. Ցանկալի կլիներ արձանագրությունների լուսանկարներն ուղեկցվեին գրչանկարներով:
5. Առկա են նաև համակարգային որոշ բացթողումներ:

Թեկնածուական ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում են գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությանը և ատենախոսը լիովին արժանի է իր հայցած՝ պատմական գիտությունների թեկնածուի կոչմանը, ինչի համար ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան հնագիտության բաժինը միջնորդում է մասնագիտական հանձնաժողովին:

ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան հնագիտության
բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու  Գ. Ն. Միրիջանյան

պ.գ.թ. Գ. Ն. Միրիջանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն

պ.գ.թ. Տ. Դալայան

